ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Գործարար հարաբերություն հաստատելու նպատակով /իրավաբանական անձ/

«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի հետ գործարար հարաբերություն հաստատելու համար իրավաբանական անձ հանդիսացող Հաճախորդի լիազորված անձը պետք է «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

1. Պետական գրանցումը հավաստող փաստաթուղթ,

2. Գործող կանոնադրությունը կամ կանոնադրությանը հավասարազոր (փոխարինող) փաստաթուղթ (ոչ ռեզիդենտ Հաճախորդի դեպքում),

3. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), կամ այլ համարժեք համարը (ոչ ռեզիդենտ Հաճախորդի դեպքում) հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),

4. Առանց լիազորագրի իրավաբանական անձի անունից գործելու իրավունք ունեցող անձանց համապատասխան պաշտոնի նշանակման փաստը հաստատող փաստաթուղթ,

5. Առանց լիազորագրի իրավաբանական անձի անունից հանդես եկող անձի՝ անձը հաստատող փաստաթուղթը և ՀԾՀ- ն,

6. Լիազորագրի հիման վրա գործող անձի դեպքում՝ նաև լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթը, ՀԾՀ- ն,

7. Սույն փաստաթղթերի ներկայացման օրվան նախորդող երեք ամսվա վաղեմության ժամկետով սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը կամ Հաճախորդի կանոնադրական կապիտալում 10% և ավելի մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ իրավասու մարմնի կողմից տրամադրված տեղեկանք,

8. Իրական շահառուների անձը հաստատող փաստաթղթերը, ՀԾՀ-ները,

9. Իրական շահառուների իրավաբանական անձ լինելու դեպքում նաև տվյալ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալներում 10% և ավելի մասնակցություն ունեցող անձանց ցանկը՝ տրամադրված իրավասու մարմնի կողմից, ինչպես նաև այդ անձանց (իրական շահառուների) անձը հաստատող փաստաթղթերը և ՀԾՀ-ները,

10. Ընկերության կողմից ներկայացված սույն փաստաթղթերի լրացված տարբերակները՝

- ✓ Իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ հայտարարությունը
- ✓ Կենսական շահերի կենտրոնի վերաբերյալ հայտարարությունը (լրացվում է օտարերկրյա հաճախորդների կողմից)
- ✓ Հաճախորդին ճանաչելու և նույնականացնելու վերաբերյալ հարցաթերթիկը (KYC)
- ✓ W-9 կամ W-8BEN-E (կախված KYC-ի արդյունքներից)
- ✓ Հաճախորդի գիտելիքի և փորձի գնահատման հարցաթերթիկը
- ✓ Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները ԱՄՆ հարկային մարմնին (IRS) տրամադրման թույլտվության վերաբերյալ հայտարարություն (անհրաժեշտության դեպքում)
- ✓ Իրավաբանական անձի անունից գործարքների կատարման նպատակով պատվեր ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց ցանկը, ինչպես նաև վերջիններիս անձը հաստատող փաստաթղթերը և ՀԾՀ-ները

11. Ընկերության Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր (ըստ անհարժեշտության):